ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության 2018 թվականի գործունեության ամփոփման հաշվետու նիստի կայացած 23. 01.2019թ

Նախագահությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետ — **Հ. Մաթևոսյանի**

Մասնակցությամբ՝

ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ — **Ա. Դավթյանի**

ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետի պաշտոնակատար — **Ս.Խմելյանի**

Արմավիրի մարզպետի տեղակալ — **Կ.Գրիգորյանի**

ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ — **Հ. Մարգարյանի**

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

ՀՀ մարզային կառույցների պատասխանատուների

ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների

Օրակարգում

1. **Արմավիրի մարզային փրկարարական վարչության 2018 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը**
   /Զեկ.ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ պետ փ/ծ գնդապետ Հ.Մարգարյան/

2. **Ամփոփիչ խոսք**
   ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ փ/ծ գնդապետ Ա.Դավթյան.
   ՀՀ Արմավիրի մարզպետ՝ Հ.Մաթևոսյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Հ. Մաթևոսյանը ողջունելով նիստի մասնակիցներին՝ նշեց, որ անելիքները շատ են, մաղթելով նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ աշխատանքային գործունեության

ընթացքում և հաշվետվությունը ներկայացնելու նպատակով ձայնը տվեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ Արմավիրի ՄՓՎ-ի պետ, փ/ծ գնդապետ Հ.Մարգարյանին:

ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ–ի պետ, փ/ծ գնդապետ Հ.Մարգարյանը զեկուցելով 2018 թվականին վարչության կողմից իրականացված աշխատանքների մասին՝ ընդգծեց, որ վարչության գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում ուղղված է եղել քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործմանը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրների իրականացմանը: Հ. Մարգարյանի զեկուցմամբ Արմավիրի ՄՓՎ-ն 2018 թվականի հիմնական միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքները կատարել է ամբողջությամբ և հաշվետու ժամանակահատվածում վարչության կողմից բացթողումներ և թերացումներ չեն գրանցվել/զեկույցը կցվում է/:

Գործունեության հիմնական ուղղություններն են եղել՝

- Արտակարգ իրավիճակների և դեպքերի արձագանքումը.
-Քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության համակարգերի նախապատրաստումը.
- Կապի և ազդարարման համակարգի կատարելագործումը.
- Հրշեջ-փրկարարական ուժերի պատրաստականության բարձրացումը.
- Մարզի պետական կառավարման մարմինների,տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկ -ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ուսուցումը:

Նրա խոսքով 2018թ-ի ընթացքում տեխնածին աղետներից գրանցվել են՝

Հրդեհի 305 դեպք, կենցաղային 187 դեպք, ավտովթարի 35, փլուզման 3, պայթյունի 1 և այլ տիպի տեխնածին աղետների 49 դեպք: 2017թ համեմատությամբ հրդեհների քանակը ավելացել է 87-ով՝ մոտ 39.9%-ով, վնասի չափը նվազել է 7 969 097 դրամով՝ մոտ 20.9% ով: Կենցաղային կանչերը նվազել են 26-ով՝մոտ 16.1 %-ով: Ավտովթարների դեպքերը ավելացել է 8-ով՝ մոտ 29.6%-ով: Այլ բնույթի դեպքերն ավելացել են 15-ով՝ մոտ 44.1%-ով: Ընդհանուր դեպքերի թիվը նվազել է 136-ով մոտ՝ 36.9% –ով:

Նա իր զեկույցում նշեց,որ Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ 911 ահազանգման կենտրոնում հաշվետու տարում գրանցվել է 86767 զանգ, սպասարկվել է, 576 տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ ահազանգ: ԱԻՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ ստորաբաժանումների և օպերատիվ խմբի կողմից արտակարգ դեպքերի, պատահարների հետևանքների վերացման նպատակով իրականացվել է 619 ելք, որից հրդեհների մարման նպատակով՝ 322 ելք, իսկ փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով՝ 222 ելք:

Հ. Մարգարյանի տեղեկացմամբ՝ հաշվետու ժամանակահատվածում մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անցկացվել են շտաբային ուսումնավարժություններ և օբյեկտային վարժանքներ, որոնք ընդգրկվել են ինչպես քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտների հիմնահարցերը,

այնպես էլ մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ պատրաստականության ապահովման խնդիրները: Միաժամանակ նշվեց,որ 2018 թվականի ընթացքում քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործման նպատակով ՄՓՎ կողմից ցուցաբերվել է մեթոդական օգնություն մարզի համայնքների, կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլանների և պլան–ժամանակացույցերի ճշգրտման ուղղությամբ:
Հ.Մարգարյանն իր զեկույցում անդրադարձավ նաև փրկարարական ուժերի պատրաստականության բարձրացման. անձնակազմի կառավարման և իրավական ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքներին:
Ամփոփելով զեկույցը՝ նա առաջարկեց 2019 թվականի վարչության գործունեությունը նպատակաուղղել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում մարզի վարչական տարածքում գործող հիմնարկ- ձեռնարկությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բարելավմանը, ղեկավար կազմի և ՔՊ մասնագետների պատրաստվածության բարձրացմանը, ինչպես նաև ուշադրություն դարձնել մարզկենտրոնում համալիր փրկարարական ջոկատի կազմավորման, ՔՊ համայնքային և օբյեկտային ոչ ռազմականացված կազմավորումների պատրաստվածության բարձրացման գործընթացին:
Հ.Մարգարյանը ընթացիկ տարվա համար կարևորեց նաև ճշգրտել բոլոր մակարդակների ՔՊ պլանները, տարահանման պլանները, պլան-ժամանակացույցերը, դրանք դարձնելով իրատեսական, հատուկ ուշադրություն դարձնելով ՔՊ ծառայությունների և ՔՊ կազմավորումների անձնակազմերի համալրվածությունը՝ հաշվի առնելով նրանց տարիքային և զորահավաքային ներգրավվածության առանձնահատկությունները:

Անդրադառնալով օրակարգային հարցին ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ Ա.Դավթյանը հանդես եկավ ամփոփիչ ելույթով: Իր ելույթում նա անդրադարձավ աղետների ռիսկերի կառավարման գործելու պլաններին՝ մասնավորապես նշելով, որ դրանց կազմման և ճշգրտման ընթացքում ՝ շատ կարևոր է որպեսզի դրանք լինեն առավել իրատեսական, հաշվի առնվեն յուրաքանչյուր համայնքի առանձնահատկությունները: Ա.Դավթյանը անդրադարձավ նաև Շանթ-2018 զորավարժությանը՝ փաստելով որ այդ ընթացքում ի հայտ եկան մի շարք թերություններ ժամկետների առումով, որոնք ահրաժեշտ է կարգավորել պլանների և օրինակելի ձևերի կազմման աշխատանքների ընթացքում:

ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը ամփոփելով նիստը, ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզի փրկարարական վարչության աշխատանքները գնահատեց բավարար, ինչպես նաև համայնքապետերի ուշադրությունը հրավիրեց աղետների ռիսկերի կառավարման պլանների ներկայացմանը՝ նշելով, որ այս ամենը թվացյալ, ձևական բնույթ է կրում քանի դեռ խնդիրներ չեն առաջացել և բոլորս էլ գիտենք, որ արտակարգ իրավիճակների կանխարգելման հետ կապված մարզում շատ անելիքներ կան: Նա առաջարկեց համայնքերի ղեկավարներին հնարավորիս շուտափույթ կազմել պլանները և համապատասխան փաթեթները՝

համագործակցելով մարզային փրկարարական վարչության հետ: Մարզպետն անդրադարձավ նաև հրդեհների կանխարգելմանը՝ այդ առումով կարևորելով հատկապես ազգաբնակչության շրջանում բացատրական աշխատանքներ իրականացնելը: Անդրադառնալով ժամանակակից կապի միջոցների ներդրմամբ մարզի բնակչության ազդարարման համակարգի վերազինմանը և շեշտելով դրա կարևորությունը՝ մարզպետ Հ.Մաթևոսյանը համայների ղեկավարներին առաջարկեց բյուջեների կազմման ժամանակ որոշակի գումար նախատեսել այդ նպատակով:

Այնուհետև ծառայության ընթացքում ցուցաբերած մասնագիտական ունակությունների, ակտիվ կազմակերպչական գործունեության, անբասիր ու բարեխիղճ ծառայության համար ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար Ֆ. Ցոլակյանի և մարզպետ Համբարձում Մաթևոսյանի կողմից հուշամեդալով և պատվոգրերով պարգևատրվեցին մարզային իշխանության տարբեր ոլորտներ ներկայացնող պաշտոնյաներ և Արմավիրի մարզային փրկարարական վարչության մի խումբ աշխատակիցներ:

Օրակարգային հարցերի քննարկման ավարտմամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը նիստը հայտարարեց ավարտված:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Արձ՝ Մ.Առուշանյան